



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ*

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի արտահերթ երրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 21 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի արտահերթ երրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 21 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ երրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԹԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՅԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 25 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 159 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերը հաստատելու և ներկայացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 21 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 160 որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի N 21-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 21 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 161 որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Հարցի քննարկման ժամանակ ներկայացավ ավագանու անդամ Կարեն Մովսիսյանը:

Ներկա ավագանու անդամների թիվը գրանցվեց 22:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի N 21-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենքյան:

Ռուբիկ Ենքյան: Տարվա սկզբում բյուջեի թիվը այլ է եղել, իսկ այս պահին կա ավելացում, խնդրում եմ պարզաբանել ավելացման հիմքերը:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Բյուջեն մշակվել է հաշվի առնելով նախորդ տարվա տվյալները, սակայն տարվա ընթացքում կատարվում են հավաքագրումներ, որոնք կանխատեսված չեն եղել բյուջեով: Վերջիններիս հավաքագրումը բերել է բյուջեի գերակատարմանը, դրանից ելնելով կատարվում է եկամուտների ծավալի մեծացում:

Ռուբիկ Ենքյան: Ներքին հողվածների տեղաշարժեր կա, թե ոչ:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Ծախսային մասերով ներքին տեղաշարժեր կան, ելնելով անհրաժեշտությունից:

Ռուբիկ Ենքյան: Ինչու՞ է մեծ բյուջեի թիվը, քանի որ 26 000 000-ից բացի ուրիշ փոփոխություն չկա:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Կատարվել է բյուջեի եկամտային և ծախսային մասերում 40 000 000-ի ֆոնդային մասի մեծացում, աճուրդների արդյունքում և տվյալ գումարը ուղղվել է փողոցների վերանորոգման հողվածին:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 162 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի թիվ 25 որոշմամբ հաստատված հավելված թիվ 2-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար կատարվեց հերթագրում: Հարցեր տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենքյան:

Ռուբիկ Ենքյան: Ինչպե՞ս հասկանում եմ քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների պաշտոնները կբարձրանան և նեկա աշխատակիցները կանցնեն ավելի բարձր պաշտոնի:

Պատասխանեց Գ.Հարությունյանը: Օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողները մասնակցում են մրցույթի և պետք է ունենան համապատասխան ստաժ և որակավորում գլխավոր պաշտոններ զբաղեցնելու համար, ուստի ճշգրիտ ասել, որ ներկա աշխատակիցները կանցնեն բարձր պաշտոնների, հնարավոր չէ, քանի որ պետք է մասնակցեն մրցույթի:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 22 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 21

դեմ – 0

ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 163 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: